

ՀՈԳԵԾՆՈՐՀ ՀԱՅՐԻԿ ՍՐԲԵՂԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայրիկ արբեղա Ավետիսյանը (Հենրիկ սարկավագ Ավետիսյան) ծնվել է 1928 թվականին։ Նրա ծնողները գաղթել են Տաճկաստանից և իրենց միջնակարգ կրթությունն ստացել Երևանի Ամերիկյան որբանոցում։ Հենրիկի ծնողներն աշխատել են իրենց երեխաներին մանուկ հասակից դաստիարակել քրիստոնեության ոգով։ Հենրիկը միշտ էլ հափշտակությամբ էր լսում բարեպաշտ մոր հետաքրքիր պատմությունները Քրիստոսի, առաքյալների, Հայ Եկեղեցու մեծ հայրապետների կյանքի զանազան դրվագների վերաբերյալ։

Միջնակարգ կրթությունը Հենրիկն ստացել է ծննդավայրում (Աշտարակի շրջան, Ուջան գյուղ)։ Չնայած տնտեսական որոշ դժվարություններին՝ ծնողները ոչինչ չեն խնայել իրենց երեխաների կրթության համար։ 1948 թվականին ավարտելով միջնակարգ դպրոցը, Հենրիկն ընդունվում է Երևանի պետական համալսարանի Ֆիլոլոգիական ֆակուլտետի փիլիսոփայության բաժինը (հոգեբանություն, տրամաբանություն և հայոց լեզու)։ 1950 թվականին վերջացնելով համալսարանի 2-րդ կուրսը, Հենրիկն ընդունվում է նորաբաց Հոգևոր Ճեմարանը։ Հոգևորական լինելու սերը վաղուց զարթնել էր նրա երիտասարդ հոգում։ Եվ նա հնազանդ գնում էր իր կոչման ետևից։ 1951 թվականին Հենրիկը ձեռնադրվում է սարկավագ և իր կյանքը ընդմիշտ կապում Հայ Եկեղեցու հետ։ 1952 թվականին ավարտելով Հոգևոր Ճեմարանը, նա մեկնում է Մոսկվա՝ ռուսաց Հոգևոր Ճեմարանում լսելու աստվածաբանական առարկաներ ու տիրապետելու ռուսաց լեզվին։

1954 թվականի սեպտեմբերի 12-ին, Ս. Խաչվերացի տոնի օրը, Մայր Տաճարում, երեք ընկերների հետ, Հենրիկը ձեռնադրվում է կուսակրոն բահանա։